

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-209-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը «եկամտահարկին» բառերից հետո լրացնել «և իրավաբանական անձի համար շահութահարկին» բառերով:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածում «եկամտահարկի» բառից հետո լրացնել «(շահութահարկի)» բառը:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածում

1) 1-ին մասում «համարվում» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 1.1-րդ մասով սահմանված դեպքում,» բառերը.

2) լրացնել նոր 1.1-րդ մաս հետևյալ բովանդակությամբ

«1.1. Սույն օրենքի անբաժանելի մասը կազմող N7 հավելվածով սահմանված գործունեության տեսակներ իրականացնողները համարվում են արտոնագրային վճար վճարող: Սույն օրենքի N7 հավելվածով սահմանված գործունեության տեսակների համար արտոնագրային վճարի հարկման օբյեկտը, արտոնագրային վճարի հաշվարկման ու վճարման կարգը, ժամկետները սահմանվում են սույն օրենքի անբաժանելի մասը կազմող N8 հավելվածով:»

3) լրացնել 5-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«5. Սույն օրենքի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածների դրույթները չեն տարածվում սույն օրենքի N7 հավելվածով սահմանված գործունեության տեսակներ իրականացնող արտոնագրային վճար վճարողների նկատմամբ:»

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածը

1) 2-րդ մասում «արտոնավճար» բառը փոխարինել «արտոնագրային վճար» բառերով,

2) լրացնել նոր մասերով հետևյալ բովանդակությամբ

«6. Սույն օրենքի N7 հավելվածում նշված գործունեության տեսակների մասով գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի համար արտոնագրում նշված արտոնագրային վճարի ելակետային տվյալի մեծությունը հարկային մարմնի կողմից փաստացի արձանագրված ելակետային տվյալի մեծությունից պակաս լինելու դեպքում արտոնագրային վճար վճարողից գանձվում է տվյալ ժամանակաշրջանի համար պակաս վճարված արտոնագրային վճարը և տուգանք՝ պակաս վճարված արտոնագրային վճարի 50 տոկոսի չափով: Հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում, նույն գործունեության տեսակի գծով նույն խախտումն արձանագրելու դեպքում արտոնագրային վճար վճարողից գանձվում է տվյալ ժամանակաշրջանի համար պակաս վճարված արտոնագրային վճարը և տուգանք՝ պակաս վճարված արտոնագրային վճարի գումարի չափով:

7. Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից առանց արտոնագրի գործունեության իրականացման տվյալ վայրում սույն օրենքի N7 հավելվածում նշված գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու դեպքում իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ ապօրինի գործունեության համար «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող տուգանքի չափով:»:

Հոդված 5. Օրենքը լրացնել N7 և N8 հավելվածներով՝ համաձայն սույն օրենքի հավելվածի:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի ապրիլի 1-ից: Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից հետո 30 օրվա ընթացքում Օրենքի N7 հավելվածով սահմանված գործունեության տեսակներ իրականացնողները հարկային մարմնի ներկայացնում են հայտարարություն արտոնագրային վճար վճարող համարվելու մասին:

Հավելված

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ
կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

«Հավելված N7
«Արտոնագրային վճարների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՈՎ ՀԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ

1. Արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակներն են՝

- 1) հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը,
 - 2) հյուրանոցային տնտեսության օբյեկտների գործունեությունը,
 - 3) թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրումը,
 - 4) վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեությունը.
 - 5) ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեությունը.
 - 6) ավտոկանգառների գործունեությունը,
 - 7) բիլիարդ խաղի կազմակերպումը.
2. Սույն հավելվածի իմաստով՝

1) հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն է համարվում խոհարարական արտադրանքի սպառման կազմակերպումը.

2) հյուրանոցային տնտեսության օբյեկտների գործունեություն է համարվում զբոսաշրջության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի սահմանած չափանիշներին չհամապատասխանող հյուրանոցային տնտեսության օբյեկտների գործունեության կազմակերպումը.

3) թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում է համարվում թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլով իրականացվող ուղևորափոխադրումը, այդ թվում ըստ նախնական պատվերով, ինչպես նաև ըստ նախնական պատվերի համապատասխան պայմանագրերի համաձայն իրականացվող ուղևորափոխադրումը,

4) վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեություն է համարվում վարսավիրանոցներում (գեղեցկության սրահներում) է համարվում վարսավիրական ծառայությունների մատուցումը: Վարսավիրանոց (գեղեցկության սրահ) է համարվում

վարսավիրական ծառայության, դիմահարդարման, դեմքի մերսման, մատնահարդարման և(կամ) նման այլ ծառայության աշխատատեղի (աշխատատեղերի) համար առանձնացված մշտական կամ ժամանակավոր շինությունը.

5) ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեությունն է համարվում ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) միջոցով ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկումը: Ավտոտեխսպասարկման կայան (կետ) է համարվում ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման համար հարմարեցված աշխատատեղի (աշխատատեղերի) համար առանձնացված մշտական կամ ժամանակավոր շինությունը.

6) ավտոկանգառների գործունեություն է համարվում ավտոկանգառում հատուցման դիմաց ավտոտրանսպորտային միջոցի ժամանակավոր կայանման ապահովումը (կազմակերպումը): Ավտոկանգառ է համարվում ավտոտրանսպորտային միջոցների ժամանակավոր կայանման համար առանձնացված տարածքը:

Հավելված N8
«Արտոնագրային վճարների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐԻ
ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՒ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

1. «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N7 հավելվածով (այսուհետ Օրենքի N7 հավելված) սահմանված գործունեության տեսակներ իրականացնող անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք տվյալ գործունեության տեսակների մասով համարվում են արտոնագրային վճար վճարող (այսուհետ՝ արտոնագրային վճար վճարող):

Անհատ ձեռնարկատերերը կամ իրավաբանական անձինք համարվում են արտոնագրային վճար վճարող նաև այն դեպքերում, երբ հանրային սննդի ոլորտում գործունեությունն իրականացվում է այլ անձանց կողմից՝ առանց այդ սրահի

(սրահների) մասով անշարժ գույքի հետ կապված իրավունքների՝ օրենքով սահմանված կարգով գրանցման (առանց պետական գրանցման): Օրենքով սահմանված կարգով վարձակալած (անշարժ գույքի հետ կապված իրավունքները ձևակերպած) հանրային սննդի սպասարկման սրահում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու դեպքում արտոնագրային վճար վճարողներ են համարվում վարձակալները:

2. Սույն հավելվածի դրույթները չեն տարածվում «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն արտոնագրային վճար վճարող համարվող անհատ ձեռնարկատերերի նկատմամբ:

3. Արտոնագրային վճարի հարկման օբյեկտ են համարվում Օրենքի N7 հավելված սահմանված գործունեության տեսակները, բացառությամբ սույն հավելվածի 4-րդ կետով սահմանված դեպքերի:

4. Արտոնագրային վճարի օբյեկտ չեն համարվում

- 1) հանրակրթական դպրոցներում, պրոֆտեխնիկական ուսումնարաններում, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում հանրային սննդի գործունեությունը,
- 2) զբոսաշրջության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի սահմանած չափանիշներին համապատասխանող հյուրանոցային տնտեսության օբյեկտներում Օրենքի N7 հավելվածի 1-ին կետի 1-ին, 4-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված գործունեության տեսակները,
- 3) առողջարանների, հանգստյան և մասնագիտացված ճամբարների կամ տների, պանսիոնների, մանկապատանեկան բնակատեղիների, ճամբարային բնակատեղիների գործունեությունը: Սույն կետում օգտագործվող հյուրանոցային տնտեսության օբյեկտների հասկացությունները կիրառվում են «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով,

- 4) թեթև մարդատար մեքենայով բացառապես սեփական ներարտադրական (ներտնտեսական) ուղևորափոխադրումը,
- 5) այն ավտոկանգառների գործունեությունը, որտեղ տեղադրված են ավտոտրանսպորտային միջոցների ելքն ու մուտքը գրանցող համակարգեր,
- 6) համայնքի ավագանու որոշմամբ համայնքի սեփականությունը հանդիսացող տարածքներում կազմակերպվող ավտոկանգառների գործունեությունը:

5. Արտոնագրային վճար վճարողները մինչև գործունեություն իրականացնելը որևէ ժամանակահատվածի (եռամսյա, վեցամսյա, իննամսյա, տասներկուամսյա) համար իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում սույն հավելվածի N1 ձևով սահմանված հայտարարություն, որտեղ նշում են՝

1) արտոնագրային վճար վճարողի՝

ա. իրավաբանական անձի անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը,

բ. հարկ վճարողի հաշվառման համարը (այսուհետ՝ ՀՎՀՀ).

2) արտոնագրային վճարով հարկվող գործունեություն իրականացնելու ժամանակահատվածը.

3) յուրաքանչյուր գործունեության իրականացման տեսակը և գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրը:

Սույն հավելվածի իմաստով եռամսյա, վեցամսյա, իննամսյա կամ տասներկուամսյա ժամանակահատվածները հաշվարկելիս ժամանակահատվածի սկզբի օրվա և վերջի օրվա ամսաթվերը ներառող ամիսները ընդունվում են որպես ամբողջական ամիսներ:

6. Հայտարարություն ներկայացնելու օրն անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը ստանում է արտոնագիր սույն հավելվածի N2 ձևին համապատասխան:

7. Յուրաքանչյուր գործունեության տեսակի մասով յուրաքանչյուր ժամանակահատվածի (եռամսյա, վեցամսյա, իննամսյա, տասներկուամսյա) և

յուրաքանչյուր գործունեության իրականացման վայրի համար տրվում է առանձին արտոնագիր:

8. Որևէ ժամանակահատվածի (եռամսյա, վեցամսյա, իննամսյա, տասներկուամսյա) համար տվյալ գործունեության իրականացման վայրի մասով արտոնագիր ստացած արտոնագրային վճար վճարողի կողմից տվյալ գործունեության իրականացման վայրի մասով ելակետային տվյալի ավելացման դեպքում մինչև ելակետային տվյալի ավելացումը ներկայացնում է դիմում նոր արտոնագիր ստանալու համար: Տվյալ դեպքում վճարվում է լրացուցիչ արտոնագրային վճար՝ ելակետային տվյալի ավելացման ամսաթիվը ընդգրկող ամսվա և մինչև ելակետային տվյալի ավելացումը ստացած արտոնագրի գործողության ավարտն ընկած ամիսների ընդհանուր թվին համապատասխան չափով: Ելակետային տվյալի ավելացման դեպքում տրվում է նոր արտոնագիրը սույն հավելվածով սահմանված կարգով՝ ժամանակահատվածի սկիզբ լրացնելով ելակետային տվյալի ավելացման ամսաթիվը ընդգրկող ամիսը, իսկ ավարտը՝ մինչև ելակետային տվյալի ավելացումը ստացած արտոնագրի գործողության ավարտի ամիսը: Որևէ ժամանակահատվածի (եռամսյա, վեցամսյա, իննամսյա, տասներկուամսյա) համար տվյալ գործունեության իրականացման վայրի մասով ելակետային տվյալը չի կարող նվազեցվել:

9. Արտոնագրային վճար վճարողները գործունեության արդյունքներից անկախ արտոնագրային վճարը հաշվարկում և վճարում են հետևյալ չափերով՝

Գործունեության տեսակը	Ելակետային տվյալը	Արտոնագրային վճարի եռամսյա դրույքաչափը 1 միավորի (դրամ)				
		Երևան քաղաքում	Մարզկենտրոններում	այլ քաղաքներում	այլ վայրերում	հեռավոր և սահմանամերձ գյուղերում
հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն	տարածք, մ ² մինչև 50 մ ² ներառյալ	225000	157500	157500	157500	67500
	տարածք, մ ² 50 մ ² ավելի՝ մինչև 300 մ ² ներառյալ	225000 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10մ ² համար 63000	157500 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10մ ² համար 45000	157500 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10մ ² համար 45000	157500 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10մ ² համար 45000	67500 գումարած 50 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար 33000
	տարածք, մ ² 300 մ ² ավելի՝ մինչև 500 մ ² ներառյալ	1800000 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար 36000	1282500 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար 25000	1282500 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար 25000	1282500 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար 25000	892500 գումարած 300 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար 18000
	տարածք, մ ² 500 մ ² մակերեսից ավելի	2520000 գումարած 500 մ ² գերազանցող մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար 18000	1782500 գումարած 500 մ ² գերազանցող	1782500 գումարած 500 մ ² գերազանցող	1782500 գումարած 500 մ ² գերազանցող	1252500 գումարած 500 մ ² գերազանցող

			դ մինչև յուրաքանչյու ր 10 մ ² համար 10750	մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար 10750	ոչ մինչև յուրաքանչյ ուր 10 մ ² համար 10750	մինչև յուրաքանչյուր 10 մ ² համար 9750
հյուրանոցային տնտեսության օբյեկտների գործունեություն	տարածք, մ ²	2200	1260	1260	1260	900
թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում	մեքենայի քանակ	29000	16800	16800	16800	16800
վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեություն	աշխատատե ր	45000	36000	36000	27000	27000
ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեություն	աշխատատե ր	45000	36000	36000	36000	27000
ավտոկանգառների գործունեություն	տարածք, մ ²	1800	360	360	360	360
բիլիարդ խաղի կազմակերպում	խաղասեղան	120000	60000	60000	60000	60000:

10. Գործունեության յուրաքանչյուր տեսակի, բացառությամբ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության, մասով արտոնագրային վճարի եռամսյա չափերը որոշվում են մեկ միավորի արտոնագրային վճարի եռամսյա դրույքաչափի և ելակետային տվյալի մեծության, իսկ սույն հավելվածով գործակից սահմանված լինելու դեպքում նաև գործակցի արտադրյալով: Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով արտոնագրային վճարի եռամսյա չափը որոշվում է ելակետային տվյալին համապատասխանող եռամսյա դրույքաչափով, իսկ սույն հավելվածով գործակից սահմանված լինելու դեպքում եռամսյա դրույքաչափի և գործակիցների արտադրյալով:

11. Մինևսույն ժամանակահատվածում տարբեր բնակավայրերում կամ տարբեր բնակավայրերի միջև նույն թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում իրականացնելու համար կիրառվում է տվյալ բնակավայրի համար սույն հավելվածի 9-րդ կետով սահմանված արտոնագրային վճարի դրույքաչափերից առավելագույնը:

12. Գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով արտոնագրային վճարի չափը սահմանվում է արտոնագրային վճարի եռամսյա չափի և տվյալ գործունեության տեսակի համար տվյալ արտոնագրում նշված ժամանակահատվածում ներառված երեք ամիսների թվի արտադրյալով՝ դրամական արտահայտությամբ:

13. Արտոնագրային վճարի հաշվարկման համար հիմք ընդունվող ելակետային տվյալներն են՝

1) հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար հանրային սննդի սպասարկման սրահի մակերեսը, որն իր մեջ ներառում է պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար նախատեսված տարածքը, իսկ բացօթյա վայրերում հանրային սննդի սպասարկման սրահ է համարվում հանրային սննդի գործունեության իրականացման ընդհանուր մակերեսը,

2) հյուրանոցային տնտեսության օբյեկտների գործունեության համար հյուրանոցային տնտեսության օբյեկտում հյուրանոցային ծառայությունների կազմակերպման համար նախատեսված շենք-շինությունների ընդհանուր տարածքը,

3) թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում իրականացնելու համար մեքենաների քանակը,

4) վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեության համար վարսավիրական ծառայության մատուցման աշխատատեղը: Վարսավիրական ծառայության մատուցման աշխատատեղ է համարվում վարսավիրական ծառայության, դիմահարդարման, դեմքի մերսման, մատնահարդարման և(կամ) նման այլ ծառայության համար նախատեսված յուրաքանչյուր տեղը: Վարսավիրական ծառայության մատուցման տարբեր աշխատատեղերը մեկ անձի կողմից համատեղման դեպքում համատեղած աշխատատեղերը համարվում է մեկ աշխատատեղ, իսկ նույնատիպ (միանման) աշխատատեղերի առկայության դեպքում այդ աշխատատեղերը դիտարկվում են որպես առանձին աշխատատեղեր,

5) ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեության համար ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման աշխատատեղը: Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման աշխատատեղ է համարվում ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկման տեսակների մեկ ամբողջական գործընթացի ապահովման համար հատուկ սարքավորումներով կահավորված տարածքը: Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման տարբեր աշխատատեղերը մեկ անձի կողմից համատեղման դեպքում համատեղած աշխատատեղերը համարվում է մեկ աշխատատեղ, իսկ նույնատիպ (միանման) աշխատատեղերի առկայության դեպքում այդ աշխատատեղերը դիտարկվում են որպես առանձին աշխատատեղեր:

6) ավտոկանգառների գործունեության համար ավտոտրանսպորտային միջոցների ժամանակավոր կայանման համար առանձնացված ընդհանուր տարածքը:

14. Արտոնագրային վճարի չափի հաշվարկման համար գործակիցներն են՝

1) սպառողների սահմանափակ քանակակազմ ունեցող հանրային սննդի գործունեության իրականացման վայրերի (օբյեկտների) համար՝ 0,5.

2) հետտապար և անհատական կամ համայնային համանման այլ ցուցադրումներ ունեցող հանրային սննդի գործունեության իրականացման վայրերի (օբյեկտների) համար՝ 3,0.

3) Երևան քաղաքում հետևյալ գործունեության տեսակների՝ հանրային սննդի (բացառությամբ մինչև 50 մ² սպասարկման սրահի մակերես ունեցող օբյեկտների), հյուրանոցային տնտեսության օբյեկտների, վարսավիրական ծառայությունների մատուցման, ավտոտեխասպասարկման կայանների (կետերի), ավտոկանգառների, բիլիարդ խաղի կազմակերպման գործունեության համար՝

առաջին և երկրորդ գոտիների համար՝ 1.4,

մյուս գոտիների համար 1.05:

Երևան քաղաքի բաշխումն ըստ տարածքային գոտիների սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

4) Աբովյան, Աշտարակ, Վաղարշապատ և Մասիս քաղաքների վարչական սահմաններում գտնվող 500 մ² սպասարկման սրահի մակերեսից ավելի տարածք ունեցող հանրային սննդի օբյեկտների համար՝ 2.0.

5) տոնավաճառների, վերնիսաժների, շուկաների, Երևանի կայարանների (ավտոկայարանների), մետրոպոլիտենի կայարանների կամ դրանց անմիջապես հարող տարածքներում գտնվող ավտոկանգառների գործունեության համար լրացուցիչ՝ 2.5:

15. Ընթացիկ տարում արտոնագրային վճար վճարող հանդիսանալուց դադարելու, գործունեությունը դադարեցնելու կամ ժամանակավոր կասեցնելու դեպքերում սույն հավելվածով սահմանված կարգով վճարված արտոնագրային վճարները չեն հաշվանցվում և չեն վերադարձվում (անկախ նրանից, թե որ ժամանակահատվածի համար է վճարվել արտոնագրային վճարը):

16. Արտոնագրային վճար վճարողներն արտոնագրային վճարը վճարում են մինչև արտոնագիր ստանալը:

17. Արտոնագրային վճար վճարողները հարկային հաշիվներ դուրս չեն գրում:

18. Արտոնագրային վճար վճարողները հանդիսանում են հարկային գործակալներ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով և նրանց վրա չի տարածվում «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթը:

19. Արտոնագրային վճար վճարողները պարտադիր սոցիալական ապահովության վճարները կատարում են «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ արտոնագրային վճար վճարող համարվելու մասին	Փաստաթղթի հերթական համարը						
	(լրացվում է հարկային մարմնի կողմից)						
1. Հարկ վճարողի հաշվառման համարը							
2. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը)							
3. Գտնվելու վայրը							
4. Արտոնագրային վճար վճարող համարվելու ժամանակահատվածը (եռամսյա, վեցամսյա, իննամսյա կամ տասներկուամսյա)							

Գործունեության տեսակը (տեսակները)	Գործունեության իրականացման վայրը	Ելակետային տվյալի մեծությունը	Գործունեության իրականացման ժամանակահատվածի		Արտոնագրային վճարի չափը, դրամ
			սկիզբը	ավարտը	

Թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում իրականացնելու դեպքում թեթև մարդատար ավտոմեքենաների պետհամարանիշները

Հայտարարությանը կից ներկայացնում եմ արտոնագրային վճարի վճարումը հաստատող փաստաթղթի պատճենը:

Կազմակերպության
 տնօրեն
 (անհատ ձեռնարկատեր)

ստորագրությունը, անունը, ազգանունը

Հայտարարության ստացման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը _____

_____ 20 թ.

(լրացվում է հարկային տեսչության

կողմից)

**Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե**

Ա Ր Տ Ո Ն Ա Գ Ի Բ N _____

_____ 20__թ.

Սույն արտոնագիրը տրվում է

(իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը,
ազգանունը)

_____ հաշվառված _____ 20__թ. ՀՎՀՀ

_____ և 20__թ. ընթացքում հանդիսանում է արտոնագրային վճար
վճարող

Գործունեության տեսակը	Գործունեության իրականացման վայրը	Ելակետային տվյալի մեծությունը	Գործունեության իրականացման ժամանակահատվածի	
			Սկիզբը (ամիս)	Ավարտը (ամիս)

Թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում իրականացնելու դեպքում՝ թեթև մարդատար ավտոմեքենաների պետհամարանիշները

Հարկային տեսչության պետ

(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

Ամփոփաթերթ

2012 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող հարկային և հարակից օրենսդրության փոփոխություններ նախատեսող օրենսդրական նախագծերի փաթեթում ներառված՝ «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների և ՀՀ կառավարության կողմից ներկայացված առաջարկությունների վերաբերյալ

Առաջարկության հեղինակը	Ներկայացված առաջարկության բովանդակությունը	Հիմնավորումներ	Եզրակացություն
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Գրիգոր Մարգարյան	1. Առաջարկվել է նախագծերով հանրային սննդի ոլորտում գործունեության համար նախատեսված դրույքաչափերի բարձրացումը նախատեսել միայն Երևանում և մարզկենտրոններում գործունեություն իրականացնող հանրային սննդի օբյեկտների համար:		Ընդունվել է: «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի նոր դրույքաչափերով բարձրացվել է միայն Երևան քաղաքում գործունեություն իրականացնող հանրային սննդի օբյեկտների արտոնագրային վճարի չափերը:
	2. Առաջարկվում է մարզերում բացօթյա վայրերում հանրային սննդի ոլորտում գործունեության համար սահմանել նաև սեզոնայնության հետ կապված ուղղիչ գործակիցներ		Առաջարկը բովանդակային առումով ընդունվել է: Հնարավորություն է տրել արտոնագիր ստանալ ըստ ամիսների, որը կկարգավորի սեզոնայնության հետ կապված հարցը:
	3. Մարզկենտրոններից և Երևան քաղաքից տարբերվող այլ քաղաքներում, ինչպես նաև Երևան քաղաքի վարչական սահմաններից մինչև 20 կմ		Առաջարկը ընդունվել է: Նշված վայրերում մինչև 50մ ² սպասարկման սրահ ունեցող

	<p>հեռավորության վրա գործունեություն իրականացնող մինչև 50մ² սպասարկման սրահ ունեցող հանրային սննդի օբյեկտների համար «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով առաջարկվող դրույքաչափերի բարձրացումը հանել:</p>		<p>հանրային սննդի օբյեկտների համար դրույքաչափի բարձրացում չի նախատեսվում:</p>
	<p>4. Թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման գործունեության համար հարկային բեռը թողել անփոփոխ:</p>		<p>Արտոնագրային վճարների դրույքաչափերը Երևան քաղաքից դուրս թողնվել է անփոփոխ:</p>
<p>ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Լարիսա Ալավերդյան</p>	<p>5. Առաջարկվում է նախագծում ներառել դրույթներ, որոնցով օրենքի 5-րդ հոդվածը կլրացվի նոր պարբերությամբ հետևյալ խմբագրությամբ՝ Առավել ռիսկային բնակավայրերի ցանկը հաստատում է ՀՀ կառավարությունը՝ ղեկավարվելով հետևյալ չափանիշներով՝ առավել ռիսկային բնակավայրեր են համարվում այն բնակավայրերը, որոնք սահմանամերձ են Ադրբեջանի Հանրապետությանը: Միաժամանակ առաջարկվում է նախագծով հաստատվող նոր 8-րդ հավելվածի վերջին սյունակի անվանման վերջում ավելացնել հետևյալ բառերը՝ «բացառությամբ առավել ռիսկային բնակավայրերից»:</p>		<p>Ընդունվել է: Հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի համար արտոնագրային վճարի չափը նվազեցվել է:</p>
	<p>6. Առաջարկվում է առավել ռիսկային բնակավայրերի համար արտոնագրային վճարների չափ սահմանել առաջարկվող արտոնագրային վճարների չափի 5 տոկոսը:</p>		
<p>ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Սամվել Բալասանյան</p>	<p>7. Առաջարկվում է նախագծով հաստատվող 8-րդ հավելվածի 2-րդ տողի «81000» թիվը փոխարինել «40500» թվով, իսկ «56700» թիվը փոխարինել «28000» թվով:</p>		<p>Ընդունվել է: Կատարվել են արտոնագրային վճարի դրույքաչափերի վերահաշվարկներ:</p>
	<p>Առաջարկվում է նախագծով հաստատվող 8-րդ</p>		<p>Ընդունվել է հեռավոր և</p>

	<p>հավելվածի աղյուսակում հանրային սննդի գործունեության իրականացման համար այլ վայրերում, ինչպես նաև հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի համար սյունակներում սահմանված դրույքաչափերը հաշվարկել Երևան քաղաքի համար</p>		<p>սահմանամերձ բնակավայրերի համար արտոնագրային վճարի չափը նվազեցվել է:</p>
	<p>8. Առաջարկվում է նախագծում ներառել դրույթներ, որոնց համաձայն առնվազն հանրային սննդի գործունեության համար արտոնագրային վճարը կարող է վճարվել ամսական կտրվածով:</p>		<p>Ընդունվել է: Նախագծով ներառվել են ամսական կտրվածքով արտոնագրային վճարի վճարող համարվելու դրույթներ:</p>
	<p>9. Առաջարկվում է անփոփոխ թողել ներկայումս գործող «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով ամրագրված գոտիականությունը, դրույքաչափերի բարձրացումներ նախատեսելով միայն Երևան քաղաքի 1-ին և 2-րդ գոտիներում:</p>		<p>Ընդունվել է: Երևան քաղաքի մասով սահմանվել է գոտիականության 2 մակարդակ և դրանց ուղղիչ գործակիցներ, որոնց կիրառման արդյունքում կբարձրանա միայն այդ գոտիներում ընդգրկվող հանրային սննդի օբյեկտների արտոնագրային վճարի չափը:</p>
	<p>10. Առաջարկվում է մարզերում արտոնագրային վճարի մասով հարկային բեռի ավելացում չնախատեսել:</p>		<p>Ընդունվել է: Արտոնագրային վճարների դրույքաչափերի ավելացում մարզերում չի նախատեսվում:</p>
<p>ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Վարդան Բոստանջյան</p>	<p>11. Առաջարկվում է նախագծով հաստատվող նոր 8-րդ հավելվածը լրացնել 9.1-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝ Երևան քաղաքում իրականացվող արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակների համար սահմանել ուղղիչ գործակիցներ հետևյալ չափերով՝ ա) մեծ կենտրոնում իրականացվող արտոնագրային վճարող հարկվող գործունեության</p>		<p>Ընդունվել է: Արտոնագրային վճարների մասով Երևան քաղաքը տարանջատվել է 1-ին և 2-րդ գոտիների և այլ վայրերի, իսկ 1-ին և 2-րդ գոտիների համար գործակից է սահմանվել 1.5:</p>

	<p>համար՝ 1.5, բ) մեծ կենտրոնից դուրս իրականացվող արտոնագրային վճարող հարկվող գործունեության համար՝ 0.7:</p>		
<p>ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդան Այվազյան</p>	<p>12. «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ, 4-րդ և 5-րդ հոդվածներում «6000000» թիվը փոխարինել «5000000» թվով, «22500» թիվը փոխարինել «18750» թվով, «187500» թիվը փոխարինել «156250» թվով, «1500000» թիվը փոխարինել «1250000» թվով իսկ «112500» թիվը՝ «93750» թվով:</p>		<p>Ընդունվել է</p>
<p>ՀՀ կառավարություն</p>	<p>1. Առաջարկվել է առավել հստակեցնել տաքսի ծառայության գործունեության սահմանումը:</p>		<p>Ընդունվել է: Համապատասխան փոփոխություն է կատարվել թիվ 7 հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետում</p>
	<p>2. Հստակեցնել նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ ենթակետով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի կիրառման դրույթները:</p>		<p>Ընդունվել է: Նախագծով սահմանվել է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի դրույթները կիրառվում են միայն անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց վրա:</p>
	<p>3. Առաջարկվել է հստակեցնել բիլիարդ խաղի կազմակերպման մասով «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» 2011 թվականի մայիսին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունված օրենքի կիրառման դրույթներ:</p>		<p>Ընդունվել է: Նախագծով առաջարկվել է սահմանել, որ բիլիարդ խաղի կազմակերպման մասով «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» 2011 թվականի մայիսին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունված</p>

			օրենքի դրույթները կիրառվում են 2012 թվականի ապրիլի 1-ից, քանի որ արտոնագրային վճարների կիրառումը նույնպես նախատեսվել է 2012 թվականի ապրիլի 1-ից:
--	--	--	--